ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի ապրիլի 18-ի, ժամը 14:00-ի նիստի
N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22.02.2023, N 33 (7924)) **ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Աղավնի Գրիգորի Հակոբյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2023 թվականի փետրվարի 22-ի N 33 (7924) համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել տնտեսագիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 10 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2023 թվականի մարտի 10-ին ռեկտորին դիմում է ներկայացրել ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Աղավնի Գրիգորի Հակոբյանը**: Ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգով»

սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց. Ա.Գ.Հակոբյանը ծնվել է 1979 թվականի հունիսի 1-ին Երևանում: 1996 թվականին ոսկե մեդալով ավարտել է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 1996 թվականին ընդունվել է «Գլաձոր» կառավարման համալսարան, որը գերազանցության դիպլոմով ավարտել է 2001 թվականին՝ ստանալով տնտեսագետ-ֆինանսիստի որակավորում: 2002 թվականին ընդունվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրա:

2006 թվականին Ա.Գ.Հակոբյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2009 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Ա.Գ.Հակոբյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 23 է (1 հետազոտություն («Ամբերդ» հետազոտական կենտրոն), 16 գիտական հոդված՝ հրատարակված ՀՀ գիտական ամսագրերում, որից 1-ը՝ համահեղինակությամբ (այդ թվում 2-ը՝ անգլերենով, 5-ը՝ ռուսերենով), 6 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում):

Աշխատանքային գործունեությունը: Ա.Գ.Հակոբյանը 01.09.2001 - 15.03.2006 աշխատել է «Գլաձոր» կառավարման համալսարանի տնտեսագիտության ամբիոնում որպես լաբորանտ, 15.03.2006 - 08.01.2013՝ տնտեսագիտության ամբիոնի դասախոս, միաժամանակ 2007 թվականի մարտի 1-ին համատեղության կարգով նշանակվել է կրթական բարեփոխումների կենտրոնի պետ, իսկ 01.09.2007 - 08.01.2013՝ համատեղության կարգով ուսումնական մասի պետ: Պրոֆեսոր Սարգսյանը նշեց նաև, որ այդ հատվածի նրա կատարած գործերի և հաջողությունների և՛ ականատեսն է եղել, և՛ անմիջական մասնակիցը: Որպես ուսանող սովորել է գերազանց, ակտիվորեն մասնակցել է ուսանողական միջոցառումներին և պրոֆեսոր Սարգսյանի առաջարկությամբ նշանակվել է «Գլաձոր» կառավարման համալսարանի ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահ:

2013 թվականի հունվարի 8-ից մինչ օրս Ա.Գ.Հակոբյանը աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համասարանում. 08.01.2013 - 15.06.2016՝ արտաքին կապերի բաժնում՝ գլխավոր մասնագետ, 15.09.2016 - 12.05.2019՝ ուսումնական բաժնի պետ, 12.05.2019 - 31.01.2023՝ շարունակականական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ (2021 թվականի ապրիլի 7-ին շարունակականական կրթության և

վերապատրաստումների բաժինը վերանվանվել է շարունակական կրթության բաժին): 2023 թվականի հունվարի 31-ից նշանակվել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար: Միաժամանակ, 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչ օրս Ա.Գ.Հակոբյանը համատեղությամբ դասավանդում է մակրոէկոնոմիկայի ամբիոնում:

Ա.Գ.Հակոբյանը 01.09.2010 - 18.04.2019 աշխատել է Գ.Վ.Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի երևանյան մասնաճյուղում որպես դոցենտ: 2013-2019 թթ. որպես արտաքին փորձագետ Ա.Գ.Հակոբյանը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամում ներգրավված է եղել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի, Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում:

Ա.Գ.Հակոբյանը ունի մեկ որդի:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2023 թվականի մարտի 28-ի նիստում (արձանագրություն N 8) քննարկվել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ա.Գ.Հակոբյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 13-րդ կետի համաձայն ներկայացրած ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի և դեկանի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Ա.Գ.Հակոբյանը ներկայացրել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել դոցենտներ Եվ.Ա.Բազինյանը, Ա.Մ.Քթոյանը: Նրանք նշել են, որ դեկանի թափուր պաշտոնի հավակնորդը համապատասխանում է դեկանի պաշտոնին ներկայացվող պահանջներին և առաջարկել են Ա.Գ.Հակոբյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Ելույթներից հետո դեկանի

պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկությանը չի մասնակցել Ա.Գ.Հակոբյանը) ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գիտական խորհուրդը Ա.Գ.Հակոբյանի մասնագիտական բնութագիրը գնահատել է դրական, որոշել է, որ հավակնորդը համապատասխանում է դեկանի պաշտոնին և երաշխավորել է Ա.Գ.Հակոբյանի թեկնածությունը ներկայացնել համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 6-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 14): Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքով ելույթ է ունեցել դոցենտ Մ.Վ.Բադալյանը: Նա հատուկ ընդգծել է, որ Ա.Գ.Հակոբյանն իր աշխատանքային ողջ գործունեության ընթացքում ցանկացած նախաձեռնություն ստանձնում է մեծ պատասխանատվությամբ և անպայման հաջողության ակնկալիքով: Ելույթից հետո դեկանի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է մրցութային հանձնաժողովի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Աղավնի Գրիգորի Հակոբյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ֆակուլտետի գիտական խորհրդի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

Զեկուցողներից հետո Աղավնի Գրիգորի Հակոբյանը ներկայացրեց ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Մ.Վ.Բադալյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Աղավնի Գրիգորի Հակոբյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 50-ը. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 34-րդ կետը, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 2 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 49, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Աղավնի Գրիգորի Հակոբյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. ապրիլի 18
Երևան